**եւ գործք** Խաչատուր Վ. Կարապետեան Ն. Ջուղայեցւոյ. իսկ 1903-7, նուիրատուութեանց եւն. **Հաշիւներ**, նաեւ **Նոր Ջուղայի Լրաբեր** թերթիկը :

## ԴԱՒՐԷԺ (ԹԷՎՐԻԶ)

264. **Տպ. Դաւրիժու Հայոց Արամեան Դպրոցի.** — Հայր Եղիշէ Գաֆրանեան իր ձեռագիր ցուցակին մէջ կը յիշատակէ 1889 թուականաւ **Ստորագրութիւն Ս. Գէորգայ** (Մուղնի) անուն գիրք մը, առանց տպարանի անուան : — Իսկ Լեօ նոր հրատարակած իր «Հայ Գիրքի տօնը» երկին մէջ կը գրէ. «Թաւրիզն ալ ունեցաւ իր տպարանը, որ բացուեց 90ական թուականներին, առաջնորդ Եղիշէ Վ. Մուրադեանի ջանքերով» : — Մեր գիտցածն այն էր որ «Արամեան դպրոց»ի այս տպարանէն 1898-1903 հրատարակուած են զանազան **Կանոնագիրներ** և **Տեղեկագիր-հաշուեկշիռներ**՝ Լսարանական, Հայուհեաց Բարեգործական, և Հակալքոհոլական Ընկ.եանց (Դաւրէժի ու Սալմաստի):

265. **Թեմական Արագատիպ Տպ. Ատրպատականի Հայերի.** — 1903-4, բաց ի վերեւ յիշուած նմանօրինակ քանի մը հրատարակութիւններէ, այս տպարանէն լոյս ընծայուած են. — **Կարմիր** (1903), **Երկերի ժողովածու**, **Վիլհելմայի գաղտնիքը**, **Օտար փունջեր**, **Կոլոնիական** քաղաքականութիւնը, **Անուրջներ** (1904), **Դիմակներ**, **Մայրական սէր**, **Տիգինէի** որդին (1905), **Բժժածներ** (1906), մեծամասնութեամբ Ատրպետի գործերը : — Ներկայիս մէջ հոն կը տպուի **Աղաղան** ամսաթերթը : — Իսկ պրսկ. յեղափոխութեան բերմամբ Դաւրէժ լոյս տեսնող **Առաւօտ** թերթը անցեալ տարի դադրեցաւ :

## ԹԵՀԵՐԱՆ (ԹԷՀՐԱՆ)

266. **Ննդ.ր. Բէկնազարեանի** տպարանէն լոյս ընծայուած են **Տաւիղ** (1894-6) և **Աստղ Արեւելեան** (1896) շաբաթաթերթերը :

267. **Փարոսի** տպարանէն լոյս ընծայուած են **Հայրենասէր Իտալացին** (Մ. Նորդաու) 1904, **Կոյր սէվրիզը** (1908), **Ծովահէնը** (1911) :

# ԳԼՈՒԽ Զ.

1660էն սկսեալ

# ՀՈԼԱՆՏԱ

մինչեւ 1717

## ԱՄՍԴԵՐՏԱՄ (ԱՄՍԹԵՌՕՏԱՄ)

26ե. **Տպարան Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի.** —

** **Մատթէոս Դպիր Ծարեցի.** — 1655ին Փիլիպպոս կաթողիկոսի վախճանումէն վերջ, յաջորդ՝ Յակոբ Դ. Ջուղայեցի որ ուսումնատենչ և ազգասէր հայրապետ մը եղաւ, մեծ հոգ տարաւ նաեւ հայ տպագրութեան գործին, կերպով մը գործադրելով վաղուց ի վեր հանգուցեալ Սրապիոն կաթողիկոսին կտակը : Այդ նպատակաւ 1656ին Եւրոպա կը ղրկէ Փիլիպպոսի քարտուղար Մ. Ծարեցին (քիչ յետոյ Ոսկան վրդ.ն ալ՝ որուն բազմաբեղուն գործունէութեան պիտի անդրադառնանք անջատաբար) : Երբ 1678ին այս կաթողիկոսը